**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը փոփոխող արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) հաստատվել է 2005թ. դեկտեմբերի 6-ին: Այն իրավական հիմք է հանդիսանում ԱՀԿ անդամ երկրների համար հատուկ հարկադրական լիցենզիաներ տրամադրելու բացառապես մատչելի ջեներիկ դեղամիջոցների արտադրության և արտահանման համար այն անդամ երկրներ, որոնք չեն կարող արտադրել իրենց հիվանդների համար բավարար քանակությամբ անհրաժեշտ դեղամիջոցներ:

Արձանագրությունը թույլ է տալիս ԱՀԿ անդամ պետություններին դեղագործական ապրանքների համար սահմանել պարտադիր արտոնագրեր՝ նպատակ ունենալով հավասարակշռել դեղագործական արտադրանքի արտոնագրային պաշտպանությունը և այդ պաշտպանության ազդեցությունը դեղամիջոցների գների վրա:

Հայաստանի Հանրապետության կողմից Արձանագրության վավերացումը կամ հաստատումը կարող է նպաստ բերել դեղագործության ոլորտի տեխնոլոգիական զարգացմանը, ոլորտի համակարգմանը, արտադրական կարողությունների աճին և նշված ոլորտներում միջազգային համագործակցությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2005 թվականի դեկտեմբերի 6-ին ստորագրված Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը փոփոխող արձանագրության վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Recoverable Signature

X 

ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN PARUYR 1512730076

**ՊԱՐՈՒՅՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**